ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԱՅԿ ՉՈԲԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**
   Հայկ Չոբանյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ռուսաստանի Դաշնություն, ք. Սանկտ Պետերբուրգ, 2021թ. հունիսի 14-15-ը:
   Ռուսաստանի Դաշնություն ք. Մոսկվա, 2021թ. հունիսի 16-ը:

4. **Հրավիրող կողմը.**
   Տիեզերագնացության միջազգային ֆեդերացիա (IAF) և Ռուսաստանի պետական տիեզերական կորպորացիա (ROSCOSMOS):

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն Տիեզերական հետազոտությունների համաշխարհային համաժողովին «The Global Space Exploration Conference 2021» (GLEX 2021):

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Տիեզերական, ավիացիոն, աստղագիտության բնագավառներին առնչվող ներկայացուցչական այս համաժողովի բացման հանդիսավոր արարողության ընթացքում նախարարի պաշտոնակատարն հանդես է եկել ելույթով: Հ. Չոբանյանն ընդգծել է, որ տիեզերական հետազոտությունների բնագավառում Հայաստանը մեծ հավակնություններ և ներուժ ունեցող երկիր է և շեշտել է, որ Հայաստանի համար շատ կարևոր է համագործակցությունը ոլորտի հիմնական դերակատարների հետ, ինչպես նաև փորձի փոխանակումն այնպիսի ուշագրավ միջոցառումներում, ինչպիսին «GLEX 2021»-ն է:

   Նախարարի պաշտոնակատարը նշել է, որ հաշվի առնելով տիեզերական հետազոտության տեխնոլոգիական առաջընթացով զուգորդվելու փաստը՝ ՀՀ կառավարությունը ներդրումներ է կատարում այս ուղղությունը զարգացնելու համար, ինչպես նաև ջանում է համագործակցել աշխարհի առաջատար երկրների հետ՝ խաղաղ նպատակներով տիեզերական տարածությունն օգտագործելու և այլ համաշխարհային մակարդակի նախագծերում ներգրավվելու համար:

   Համաժողովի ընթացքում տեղի են ունեցել լիագումար նիստեր տիեզերական գործակալությունների ղեկավարների մասնակցությամբ, ինչպես նաև թեմատիկ քննարկումներ,

բանակցություններ, փոխգործակցության համաժողով, հատուկ նիստ՝ նվիրված Յուրի Գագարինի թռիչքի 60-ամյակին:

Առավել շոշափելի էին Ռոսկոսմոս պետական կորպորացիայի ղեկավար Դմիտրի Ռոգոզինի հետ հանդիպան արդյունքները: Հանդիպման ընթացքում քննարկվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի հայկական կողմի վավերացման հարցը: Նախարարի պաշտոնակատարը «Ռոսկոսմոսի» ղեկավարին տեղեկացրել է հայկական կողմի պատրաստակամության մասին՝ առաջիկայում սկսելու համաձայնագրի վավերացումը:

Հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի՝ քննարկվել են տիեզերական ոլորտում աշխատող հայ և ռուսաստանյան ընկերությունների համագործակցության և մասնավոր սեկտորի զարգացման աշխատանքների ընդլայնման հարցերը: Ներկայացվել են Հայաստանում ստեղծված և հաջողությամբ կիրառվող տեխնոլոգիաները և հարթակները, և որոշվել է ստեղծել աշխատանքային հարթակ՝ հետագա քննարկումների և համագործակցության համար:

Ռոսկոսմոս պետական կորպորացիայի ղեկավար Դմիտրի Ռոգոզինի հետ հանդիպման ավարտին նախարարի պաշտոնակատար Հ. Չոբանյանը հրավիրել է վերջինիս «STARMUS» գիտության և արվեստի համաշխարհային փառատոնին, որը տեղի կունենա Երևանում 2022թ. սեպտեմբերին: Սա հիանալի առիթ կհանդիսանա՝ ներգրավելու ու արդյունավետ բանակցություններ անցկացնելու համար ոլորտային բոլոր խոշոր ընկերությունների, որոշում կայացնողների, բարձր մակարդակի ներկայացուցչական կազմերի և այլ նշանակալի դերակատարների հետ:

Հ. Չոբանյանի կողմից նշվել են Հայաստանում ոլորտի զարգացման համար կատարված կարևոր քայլերը, մասնավորապես՝ ոլորտի ձեռնարկությունների համար ընդունված 0% հարկային օրենսդրությունը, կատարվելիք աշխատանքները՝ Հայաստանում աշխատելու ցանկություն ունեցող մասնավոր ընկերությունների ներգրավման ուղղությամբ:

Նախարարի պաշտոնակատարը տիեզերական գործունեության ոլորտի կրթության, գիտության և տեխնոլոգիաների զարգացման ոլորտում համագործակցության վերաբերյալ քննարկումներ է ունեցել նաև Ռոսկոսմոս կորպորացիայի մի քանի դուստր ընկերությունների, ոլորտային միջազգային կառուցների, արտերկրյա տիեզերական գործակալությունների ներկայացուցիչների (ներառյալ՝ նախագահներ), եվրոպական համալսարանների ներկայացուցիչների, ինչպես նաև ոլորտային ընկերություններին իրավաբանական և բիզնես խորհրդատվական ծառայություններ մասնակցող ընկերությունների հետ: Քննարկումների արդյունքում շեշտադրվել է կողմերի համագործակցության պատրաստակամությունը, և քննարկվել են հետագա քայլերը:

Ծրագրվում է կատարված այցի շրջանակներում կայացած քննարկումների հիման վրա համագործակցության ծրագրերի հայեցակարգեր մշակել՝ Ռոսկոսմոս կորպորացիայի նախագահ Դ. Ռագոզինի օգոստոսյան այցի շրջանակներում քննարկելու համար, ինչպես նաև աշխատանքային կարգով քննարկումներ սկսել արտասահմանյան և միջազգային

կազմակերպությունների հետ և սույն թվականի հոկտեմբերի վերջին տասնօրյակում Արաբական Միացյալ Էմիրություններում նախատեսվող համաժողովի շրջանակներում ստորագրել նախապես համաձայնեցված համագործակցության համաձայնագրեր՝ ուղղված ոլորտի կայուն զարգացման ապահովմանը:

Նախարարի պաշտոնակատար Հ. Չոբանյանը հանդիպումների ժամանակ խոսել է Հայաստանի տեխնոլոգիական ոլորտում տեղի ունեցող զարգացումների, ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության ու առաջնահերթությունների, Հայաստանի մեծ ներուժի և դրա հիման վրա բարձր ու տեղեկատվական տեխնոլոգիաների հետագա բարելավման մասին: Նա ներկայացրել է ոլորտային զարգացումների կարևորությունը երկրում թվայնացման, տնտեսության առաջընթացի և Հայաստանում միջազգային ներդրումների նպատակահարմարության հարցում:

Հարկ է նշել նաև, որ պատվիրակությունը հանդիպել և կոնտակտային տվյալներով է փոխանակվել մի շարք ոլորտային խոշոր ընկերությունների հետ, որոնց թվում են.

- «International Astronautical Federation»,
- «Russian Space Systems»,
- «Keldysh State Scientific Center»,
- «Terra Tech»,
- «Glavkosmos»,
- «Glavcosmos Launch Services»,
- «University of Novi Sad (Serbia, Faculty of Technical Sciences)»,
- «Technical University of Dresden, Faculty of Mechanical Science and Engineering»,
- «Institute of Aerospace Engineering»,
- «Jet Propulsion Laboratory California Institute of Technology»,
- «Norwegian Space Agency»,
- «German Aerospace Agency»,
- «The International Lunar Exploration Working Group (ILEWG)»,
- «UNIDROIT (The International Institute for the Unification of Private Law)»,
- «First Steps Legal (Legal/business company consulting space industry startups in the UK)»,
- «Diplomatic Representative of the Peoples Republic of China»,
- «Embassy of the Republic of Lithuenia to the Russian Federation»:

Մի շարք հանդիպումներ են տեղի ունեցել նաև Մոսկվայում, հունիսի 16-ին՝ Ռուսաստանի տիեզերական արդյունաբերությունը ներկայացնող հայազգի անհատների հետ, որոնց ընթացքում քննարկվել են Հայաստանում տիեզերական ոլորտում համագործակցության հնարավորությունները:

7. Ստորագրությունը, ամսաթիվը.

Հայկ Չոբանյան
21.06.2021թ.